«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ատենապետության
գնդապետ _____ Մ. Մուրադյան
«29» ____05____ 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Լուսինե Վոլոդյայի Սարգսյանի՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04 «Դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ, հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյանի, Գ. Մարուքյանի, իրավաբանական գիտությունների թեկնածուներ Ա. Բագրատյանի, Կ. Բատիկյանի, ամբիոնի դասախոսներ Ա. Տոնոյանի, Լ. Թասալյանի, ամբիոնի ուսումնական ասիստենտ Գ. Խաչատրյանի, պայմանագրային դասախոս Դ. Բայրամյանի, քննարկեց Լուսինե Վոլոդյայի Սարգսյանի՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ Քաղաքացիական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04-«Դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ, հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ժամանակակից հայ հասարակության ներքին բարեփոխման գործընթացներն իրավական պետության կայացման, քաղաքացիական հասարակության բնականոն զարգացման նպատակներով պայմանավորում են նաև դատավարագիտության իրավունքի սուբյեկտի

իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների հետազոտության արդիականությունը: Բացի այդ, աշխարհում իրավական գլոբալացման գործընթացներով պայմանավորված, անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու նոր իրավական ընկալում: Ընդ որում՝ նման ընկալման առանցքն անձնակենտրոն իրավական համակարգի գաղափարն է: Կարևորելով իրավունքի սուբյեկտի տեղն ու դերը դատավարական իրավակարգավորումների կառուցակարգում՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված հայցի ապահովման արդի հիմնախնդիրների համակարգի, իրավական ապահովման և իրավական կարգավորման հարաբերակցության, իրավասուբյեկտության և հարկադիր ապահովման մեխանիզմների իրացմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասը ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական-տեղեկատվական, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձաքննությունը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հայցի ապահովման ինստիտուտի իրավական» գլխի շրջանակներում հեղինակն ուսումնասիրել է հայցի ապահովման ինստիտուտի իրավական կարգավորումը և նշանակությունը դատավարագիտության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մեջ և հայցի ապահովման ինստիտուտի զարգացման պատմության հիմնական ուղենիշները:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Հայցի ապահովման ինստիտուտի կիրառումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» խորագիրը, լուսաբանված են հայցի ապահովման կիրառման նախապայմանները և վերացումը, հակընդդեմ ապահովումը և հայցի ապահովմանն առնչվող վնասների հատուցումը, նախնական ապահովման միջոցները, ինչպես

նաև հայցի ապահովման որոշումներին առնչվող բողոքարկման և կատարման հիմնախնդիրները:

«Հայցի ապահովման առանձին միջոցների կիրառման առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» խորագրով երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է հայցի ապահովման միջոցների տեսակները ՀՀ քաղաքացիական դատավարությունում, պատասխանողին պատկանող կամ նրա մոտ գտնվող գույքի վրա արգելանք դնելը, պատասխանողի կամ այլ անձանց վեճի առարկայի վերաբերյալ որոշակի գործողությունների կատարելն արգելելը կամ պարտավորեցնելը: Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի եզրահանգումները:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Գրախոսվող աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է թե՛ քննարկվող ոլորտին առնչվող, օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում առկա հակասություններով, ոլորտում առկա օրենսդրական բացերով, թե՛ առանցքային հարցերի առնչությամբ դատավարագետների, այդ թվում՝ այլ երկրների՝ ոլորտի մասնագետների մոտեցումներում առկա էական տարբերություններով:

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական զարգացմանը համահունչ առանցքային կարևորություն ունի անձանց դատական պաշտպանության հնարավորությունների և մեխանիզմների սահմանումը: Դատական պաշտպանությունը, ինչպես հայտնի է, սահմանադրորեն երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման կարևորագույն երաշխիքներից մեկն է: Այս առումով՝ առանցքային կարևորություն է ստանում դատական համակարգում օրինական դատական ակտերի կայացման գործընթացը, որին էապես նպաստող ինստիտուտներից մեկը հենց հայցի ապահովման միջոցների կիրառումն է: Վերոշարադրյալը, անկասկած, հաստատում է ներկայացված հետազոտության արդիականությունը:

Ասպիրանտի կողմից ստացված առավել էական գիտական արդյունքները, որոնք կանխորոշում են գիտական նորույթը: Լ.Կ. Սարգսյանի աշխատանքում ընդհանուր առմամբ պատշաճ կերպով հետազոտված է հայցի ապահովման հիմնախնդիրը, ներկայացված է դրա դերն ու նշանակությունը դատավարության մեջ, քննարկման առարկա են դարձած ինստիտուտի զարգացման պատմությունը, կիրառման նախապայմանները, հայցի ապահովման միջոցի

փոփոխումն ու դրա վերացումը, հայցի նախնական ապահովման միջոցները և ինստիտուտի առավել առանցքային հիմնահարցերը: Հեղինակը խնդիրները դիտարկել է՝ հիմքում դնելով ինստիտուտի նաև պատմական զարգացման առանցքները, ինչն առավելագույնս է ընդգծել աշխատանքի լուրջ տեսական և գործնական նշանակությունը:

Վերոնշյալ հիմնախնդիրների ուսումնասիրության համար հեղինակը հիմք է ընդունել ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության, դատական պրակտիկայի ամփոփման նյութերի շրջանակներում կատարված հետազոտությունները, այնպես էլ օտարերկրյա գիտնականների կարծիքների համեմատական վերլուծությունները:

Գիտական դրույթների, հետևությունների և առաջարկությունների հիմնավորվածությունը և արժանահավատությունը: Լ.Վ. Սարգսյանի թեկնածուական ատենախոսությունն ավարտուն գիտական հետազոտություն է: Թեման, բովանդակությունը, նպատակը, խնդիրները տրամաբանորեն փոխհամաձայնեցված են: Գիտական նորույթ պարունակող դրույթների բովանդակությունը համապատասխանում է հայտարկված մասնագիտությանը: Աշխատանքում հեղինակին հաջողվել է զարգացնել տեսական դրույթներ և մշակել գործնական առաջարկներ՝ տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքների և մոտեցումների համադրման և ոլորտի գործնական կիրառման առանձնահատկությունների համադրման միջոցով:

Ասպիրանտի հետազոտության արդյունքների հիմնավորման նպատակով կիրառվել են ճիշտ գիտական մեթոդներ: Դրույթների և եզրակացությունների հիմնավորվածության բարձր մակարդակը հավաստվում է գրականության ցանկում աղբյուրների ծավալով, հետազոտության հիմնական դրույթները շարադրված են համապատասխան հրապարակումներում:

Ատենախոսության գիտական արդյունքները հիմնվում են պաշտոնական աղբյուրներից ստացված զգալի ծավալով տեղեկատվության վերլուծության վրա, ինչն էլ պայմանավորում է դրանց արժանահավատությունը:

Հեղինակային ըմբռնումը, հետևությունները և առաջարկությունները հիմնավոր են, ձևակերպված գիտական դրույթները՝ նոր:

Աշխատանքի ձևակերպմանը և բովանդակությանը ներկայացվող դիտողություններ:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Պաշտպանության ներկայացված 2-րդ դրույթի շրջանակներում հեղինակի կատարած՝ հայ իրավունքի աղբյուրների պատմական ուսումնասիրություններն ու վերլուծությունները որքան էլ վկայում են թեմայի խորքային ուսումնասիրության մասին, այնուամենայնիվ, կարծում ենք, որ տվյալ դասիչով գիտական աստիճանի հայցման ատենախոսության շրջանակներում այն չի կարող դիտվել որպես պաշտպանության ներկայացվող դրույթ:

2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող տասներկուերորդ դրույթը: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի առաջարկվող փոփոխությունների 1-5 և 10-րդ կետերն արդեն իսկ առկա են գործող կարգավորումներում, իսկ մյուս կետերի ներմուծման մասով, կարծում ենք, հիմնավորումներն առ այն, թե դրանց հետագա կիրառման մասով ի՞նչ խնդիրներ լուծում կստանան, հստակեցված չեն:

3. Ներկայացված ատենախոսության եզրակացության 7-րդ կետում հեղինակը նշում է, որ, ըստ իրեն, ՀՀ քաղ. դատ. օր-ի 38-րդ հոդվածի 7-րդ կետի շարադրանքը՝ կապված վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն շահագրգռություն չներկայացնող երրորդ անձի՝ հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունք չունենալու հետ, արդարացի չէ: Ըստ նրա՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը ևս պետք է օրենքով ունենա հնարավորություն՝ ներկայացնելու հայցի ապահովման միջնորդություն:

Կարծում ենք՝ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձին հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունք տալն անտրամաբանական է, քանի որ միայն այն հանգամանքը, որ տվյալ անձը որևէ ինքնուրույն պահանջ չունի վեճի առարկայի նկատմամբ, արդեն իսկ բացառում է հայցի ապահովման միջոցի կիրառման մասով շահագրգռություն ունենալու հանգամանքը:

4. Ատենախոսության եզրակացության 8-րդ կետում առկա է վիճահարույց ձևակերպում: Մասնավորապես՝ հեղինակը նշում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելիս դատարանները պետք է առաջնորդվեն պատասխանողի կամ դատավարության այլ մասնակցի (որի նկատմամբ կիրառվում են հայցի ապահովման միջոցներ) անբարեխղճության կանխավարկածով: Սակայն անմիջապես հաջորդ նախադասության մեջ, հակասելով նախորդ

մտքին, նա նշում է, որ դատարանը պետք է հանգի այն համոզմունքին, որ դիմողի ներկայացրած ապացույցներն ավելի շուտ վկայում են հայցի ապահովման միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին, քան հակառակը: Կնշանակի՝ տվյալ դեպքում դատարանը պետք է առաջնորդվի ոչ թե անբարեխղճության, այլ, հակառակը, բարեխղճության կանխավարկածով: Կարծում ենք՝ եզրակացության 8-րդ կետը ենթակա է վերաձևակերպման:

5. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես՝ ատենախոսության «Մասնագիտական գրականություն» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց էջերի ընդհանուր քանակը: Բացակայում են էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները:

Չթերագնահատելով ատենախոսի իրականացրած հետազոտության արժեքը՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ:

Լուսինե Վոլոդյայի Սարգսյանի՝ «Հայցի ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» խորագրով թեկնածուական ատենախոսության վե-

բաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստել է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի դոցենտ, ոստիկանության կապիտան Գ. Մարուքյանը:

Քննարկվել և հավանության է արժանացել քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի 2023թ. մայիսի 15-ի նիստում, արձանագրություն թիվ 7:

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր
կատարող, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության կապիտան _____ Գ. Ս. Մարուքյան

Գ. Ս. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի
տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ _____ Գ. Գ. Մալխասյան